ԻՆՉ Է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ.

Յիսուս ճշմարտութիւնը մարդկանց ցոյց տալու և հասկացնելու համար աշխարհ եկաւ.

Քարոզեց ճշմարտութիւն։

Մարդկանց ականջին քաղցր հնչեց ճշմարտութեան անունը և նրանք հրապուրուեցին ու քրիստոնեայ դարձան։ Ցաճախ կրկնում են Յիսուսի և ճշմարտութեան անունը։

Բայց ո՞ւր է ճշմարտութիւնը և ի՞նչ։

—Մարդիկ Յիսուսի հետ խաչել էին «ճշմարտութիւնը»։ Նա, «ճշմարտութիւնը», Յիսուսի հետ գերեզման իջաւ. Յիսուսի հետ յարութիւն առաւ, Յիսուսի հետ քառասուն օր միայն ձեաց երկրի վերայ մարդկանց փոքրիկ շրջանում և այդ մարդկանց աչքի առաջ, Յիսուսի հետ, համբարձուեց։ Այնուհետև՞։

Ճշմարտութիւնը Յիսուսի ականատես փոքրիկ շրջանում անգամ վիճելի դարձաւ։

Մարդկանց շրթունքները «ճշմարտութիւն» բառը հնչում են որպէս ծնծղայ, և երբ տեսնում են մէկին ճըշմարտութեան անունով խօսելիս՝ Պիղատոսի պէս հեգնանքով ասում են. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»։

Ց. Ա. Եպ.

2 Ապրելի 1917 թ.